80-ԱՄՅԱԿ

ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

Մեր դարի երկրորդ կեսի հայ լեզվաբանության ամենաերևելի դեմքը Գևորգ Ջահուկյանն է: Ավելի քան հիսուն տարի անընդհատ, այսինք՝ առանց ոչ անհրաժեշտ ընդհատման նա աշխատել է հայոց լեզվի պատմության անդաստանում, որ ձգվում է Ք. ա. 5-րդ հազարամյակից մինչև մեր օրերը:

Եվ այսօր նա ութսուն տարեկան է, արդեն մեծապես վաստակած, սակայն դեռևս անդադրում, առատ հունձքի տեր, որ իր ամբարածն իբրև սերմ է տալիս գալիք սերունդներին, միշտ անձանձիր աշխատած, բայց և եռանդի է մղում իր վաստակն ըստ ամենայնի իմացողներին:

Ի տարբերություն իր մեծանուն ուսուցիչ Հ. Աճառյանի, այլև իր մյուս նախորդների, Գ. Ջահուկյանը մայր հայրենիքում կրթություն ստացած և գիտության ասպարեզ մտած անուն է: Նա վառ օրինակ է անցած ութ, անգամ տասը տարիների, որոնք մեզանում ապահովել են կրթության և գիտության որոշակի առաջընթաց:

Մեծ լեզվաբանի ողջ կյանքն ու գիտակցական գործունեությունը ինքնատիպ երևույթ է հայ մտավորական մարդու անսպառ եռանդի ու անմնացորդ նվիրումի: Նա ապրել է ինքնամոռաց կյանքով, ստեղծագործել է միայն իրեն հատուկ աշխատասիրությամբ. նրա ոչ մի ժամն իզուր չի անցել, նա մտածել է նույնիսկ գրիչը թանաքամանին մեկնելու ընթացքում:

Գ. Ջահուկյանը ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին, ՀՀ Տաշիրի մարզի Մեծավան գյուղում: 1937 թ. ավարտել է Երևանի Ստ. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը, 1941 թ.՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

Ծառայել է բանակում, եղել է ուսուցիչ Հրազդանի շրջանում: 1944 թ. ընդունվել է համալսարանի ասպիրանտուրան, 1947 և 1955 թթ. պաշտպանել է թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ՝ նվիրված 11-14-րդ դդ. քերականություններին, 18-19-րդ դդ. հայ լեզվաբանական մտքի և աշխարհաբարի հարցերի քննությանը: 1958 թ. ստացել է պրոֆեսորի կոչում, 1968 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1974 թ.՝ ակադեմիկոս: 1962 թ. առ այսօր նա ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի տնօրենն է, ըստ այդմ համակարգողն է վերջին տասնամյակների լեզվաբանական գիտության, որ ծավալվում է ոչ միայն այդ, այլև հայերենագիտական այլ կենտրոններում: Գ. Ջահուկյանը գիտական մի շարք հաստատությունների, բազմաթիվ ընկերությունների անդամ է կամ համանախագահ, բազմիցս արժանացել է անբասիր աշխատանքի համար տրվող պարգևների և մրցանակների: 1945 թ. մինչև այժմ դասավանդում է Երևանի պետական համալսարանում, նույնպիսի համատեղությամբ աշխատել է նաև այլ բուհերում:

Լեզվաբանական աշխատանքը, առանց հին ու նոր լեզուների լայն իմացության, բավականին դժվարին կարող է լինել: Գ. Ջահուկյանը տիրապետում է ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներին, մասնագիտական կտրվածքով ոչ միայն գիտի հունարեն, լատիներեն, պարսկերեն, այլև ծանոթ է կովկասյան, Առաջավոր Ասիայի և Բալկանյան թերակղզու հնագույն լեզուներին (խուռիերեն, ուրարտերեն, խեթերեն, լուվերեն, փռյուգերեն, թրակերեն և այլն):

Գ. Ջահուկյանը համաշխարհային ճանաչում ձեռք բերեց, երբ ընդամենը 40 տարեկան էր: «Լեզվաբանության պատմություն» երկհատոր ծավալուն աշխատությունը, որ օտար լեզուներով արժանացավ բազմաթիվ գրախոսությունների (Վլ. Բենեցեանուի, Լյուդմիլա Մոտալովայի, Լ. Զգուստայի և ուրիշների կողմից), բացառիկ երևույթ էր իր ընդգրկումով և գիտական վերլուծության ու շրջանաբաժանման ինքնատիպությամբ: Ճանաչումը խորացավ, երբ 60-ական թթ. սկզբներին մեկը մյուսին հաջորդելով լույս տեսան Գ. Ջահուկյանի համեմատաբանական-հնդեվրոպաբանական աշխատությունները՝ կապված ոչ միայն ուրարտերենի ու հայասերենի, այլև դրանց և հնդեվրոպական ու կովկասյան լեզուների ունեցած առնչությունների բացահայտման հետ: Գ. Ջահուկյանը մեծ նպաստ է բերում հայերենի և հնդեվրոպական հին լեզուների փոխհարաբերության պարզաբանման գործում:

Այսօր դժվար է մատնանշել հայերենի ուսումնասիրության որևէ բնագավառ, որտեղ Գ. Ջահուկյանն ասած չլինի իր խոսքը: Այդ բնագավառներից մենք կառանձնացնենք հատկապես մի քանիսը՝ հայոց լեզվի և հայ լեզվաբանության պատմություն, հայոց լեզվի տեսական հիմունքներ, հայ բարբառագիտություն, ընդհանուր լեզվաբանություն: Իսկ եթե հայոց լեզվի պատմությունը վերցնենք իր ողջ ծավալով, ապա հայերենի նախագրային ժամանակաշրջանի պատմության լավագույն ուսումնասիրողը 50-ական թթ. մինչև այժմ մնում է Գ. Ջահուկյանը: Այս բնագավառում Գ. Ջահուկյանը նախկինում որոշակիորեն հետևում էր դասական

ավանդույթին (Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Հ. Աճառյան), սակայն հետագայում ավանդույթի վրա կառուցեց իր նոր մոտեցումներն ու գաղափարները, ըստ այդմ կանխագծեց արդի հայ համեմատաբանության անցնելիք ուղիները: Այսպես. հնդեվրոպական նախալեզվի ոչ մի օրինակ, այլ բարբառային տարբերակվածությամբ օժտված լինելու մասին եղած գաղափարը, որն արտահայտել էին իր նախորդները (Ա. Մեյե, Վ. Պորցիգ և ուրիշներ), Գ. Ջահուկյանն իր մի քանի ուշագրավ հոդվածներում զարգացնում է իբրև տարբերակայնության (վարիատիվության) տեսական հիմք: Եվ վերջինս, կարծում ենք, մեծ հնարավորություն է ստեղծում հայերենի հետագա ուսումնասիրության համար:

Գ. Ջահուկյանը ոչ միայն լեզվական փաստերն ու երևույթներն ամբողջացնող և ի մի բերող, այլև դրանց նկատմամբ տեսական նոր մոտեցում և տեսություն մշակող լեզվաբան է: Այս տեսակետից դասական աշխատություններ են «Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» (Ե., 1967), «Հայոց լեզվի համեմատական քերականություն» (Ե., 1982), «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» (Ե., 1987) գրքերը: Եվ քանի որ այդ և նման շատ գրքեր պարունակում են հսկայական գիտելիք, գրված են խորը վերլուծությամբ, սովորական պատկերացմամբ գրեթե անհասանելի շարադրանքով, ուստի դրանք գիտական լայն շրջաններում առաջ են բերում հեղինակի նկատմամբ խորին պատկառանք, եթե չասենք՝ նաև երկյուղածություն: Գ. Ջահուկյանի հիմնարար աշխատություններն ըստ ամենայնի կարդալու կամ ըմբռնելու համար, անկասկած, անհրաժեշտ է հիմնավոր մոտեցում ամեն մի քննարկվող հարցի նկատմամբ, պարտադիր է այդ բագավառին վերաբերող ոչ միայն հայ, այլև ռուս և օտար մասնագետների աշխատությունների իմացություն: Գ. Ջահուկյանի աշխատությունները գրված են ժամանակի գիտության, նկատի ունենք ոչ միայն ընդհանուր լեզվաբանության և համեմատաբանության, այլև փիլիսոփայության, ժողովուրդների պատմության, հնագիտության և հնէաբանության նորագույն տվյալների օգտագործումով: Մեզանում իր սերնդի ներկայացուցիչներից երևի ոչ ոք այնպես լավ տեղյակ չէ արդի գիտության մեջ կատարվող տեղաշարժերին, ինչպես Գ. Ջահուկյանը:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալու արդի հայերենագիտության, հատկապես համեմատական լեզվաբանության հետ կապված հրատապ մի քանի խնդիրների, որոնց լուծումն առանց Գ. Ջահուկյանի հիմնարար աշխատությունների տվյալների, այս կամ այն խնդրի վերաբերյալ նրա արտահայտած գաղափարների օգտագործման հազիվ թե հնարավոր լինի իրականացնել հետագայում:

Հայերենում հնդեվրոպական պայթական բաղաձայնական համակարգն արտացոլված է շատ յուրահատուկ ձևով. Գ. Ջահուկյանը լավագույնս ուսումնասիրել է երևույթը և սահմանել առաջին և երկրորդ տեղաշարժի հետ կապված որոշակի տեսություն: Նորագույն տվյալներով դատելով՝ առաջադրվում է, այսպես կոչված, «անտեղաշարժ» համակարգ, որի ապացուցման համար մեծ ջանքեր պիտի գոր-

ծադրվի այդ ուղղությամբ: Եվ այդ խնդրի լուծման հիմքում անհրաժեշտ պիտի ընկած լինեն Գ. Ջահուկյանի ուսումնասիրությունների տվյալները:

Մեծ կարևորություն ունեն Գ. Ջահուկյանի այն աշխատությունները, որոնցում քննարկվում է Հայասայի և «հայասերենի» խնդիրը. մեզ հասած մի քանի տասնյակ հատուկ անունների այն ստուգաբանությունները, որոնք տրվում են Գ. Ջահուկյանի կողմից, արդյունք են ոչ միայն նախկինում եղած տեսակետների օգտագործման, այլև նոր մոտեցման: Իսկ խնդրի լուծումը դեռևս հեռու է վերջնական լինելուց, որովհետև պետք է նկատի ունենալ նաև այն, որ «հիշյալ անունների ոչ-հայկական բնույթի բացահայտումը դեռևս չի նշանակում, թե Հայասայի բնակչության լեզուն չի կարող եղած լինել նախահայերենը„:

Այսպես, կարող ենք մատնանշել նաև հայերենում հնդեվրոպական կոկորդալինների արտացոլման, այսպես կոչված, «ձայնածերպային» (գլոտալ) բաղաձայնների հայկական դրսևորման խնդիրները, որոնց գիտական ուսումնասիրման առումով հսկայական նշանակություն ունեն Գ. Ջահուկյանի մոտեցումները:

60-ական թթ. կեսերից Գ. Ջահուկյանը մշակում էր լեզվի ուսումնասիրության ընդհանուր լեզվաբանական կաղապար՝ գրելով «ժամանակակից հայերենի հոլովման համակարգը», «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը», «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» և «Լեզվի ընդհանրական տեսություն. սուբստանցիոնալ լեզվաբանության պրոլեգոմեններ» աշխատությունները: Այս վերջին գիրքը, որը գրված է ռուսերեն և լույս է տեսել բոլորովին վերջերս, կարծում ենք, որ Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական աշխատությունների գլուխգործոցն է: Դեռևս վաղ է խոսել այդ աշխատության մասին, քանի որ նրանում ընդգրկված հարցերը քննարկված են գիտական լայն շրջանակի մեջ, գիտական մտքի մեծ ընդհանրացմամբ, լեզվական և արտալեզվական աշխարհի փոխներթափանցման ինքնատիպ մեկնաբանությամբ:

Հայ լեզվաբանական միտքը Գ. Ջահուկյանը բարձրացրել է մի նոր, աննախադեպ աստիճանի, որն ամուր հիմք կարող է հանդիսանալ ընդհանուր լեզվաբանության և հայերենագիտության հետագա զարգացման համար: Հայագիտության մեծերի շարքում իր ուրույն տեղն ունի Գ. Ջահուկյանը, իսկ դա նրա վաստակի ամենամեծ հատուցումն է:

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ